

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ)

ԵՎ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ)

ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

և

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

այսուհետ համատեղ՝ «Կողմեր»,

Հաշվի առնելով, որ Կողմերն ունեն իրենց բարեկամական և համագործակցության կապերն ամրապնդելու միևնույն ցանկությունը,

Նկատի ունենալով, որ առկա է իրենց տնտեսական և ֆինանսական համագործակցությունն ակտիվացնելու և ընդայնելու ցանկություն,

Ընդունելով, որ Զարգացման ֆրանսիական գործակալությունը (այսուհետ՝ «ԶՖԳ») և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերությունը (այսուհետ՝ ՊՐՈՊԱՐԿՈ), որպես ԶՖԳ-ի՝ մասնավոր սեկտորի զարգացման ֆինանսավորման ոլորտում մասնագիտացված մասնաճյուղ, գործունեություն են ծավալում Հայաստանի Հանրապետության տարածքում,

Հաշվի առնելով, որ ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն առանցքային տեղ են զբաղեցնում զարգացող երկրներին ցուցաբերվող պետական օժանդակության ֆրանսիական համակարգում և գործունեություն են իրականացնում ավելի քան 80 երկրներում շուրջ վաթսուն տեղական ներկայացուցչությունների ցանցի միջոցով,

Հաշվի առնելով, որ ԶՖԳ-ն Ֆրանսիական դրամավարկային և ֆինանսական օրենսգրքի կանոնակարգային հիմնադրույթներով ղեկավարվող առևտրային և արդյունաբերական բնույթի պետական հաստատություն է, որը.

- պայքարում է աղքատության դեմ, սատարում է տնտեսական աճին և մասնակցում համաշխարհային հանրային ունեցվածքի պահպանմանը թույլ զարգացած և զարգացող երկրներում և ֆրանսիական անդրծովյան տարածքներում,

- գտնվում է Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության, էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության, անդրծովյան տարածքների նախարարության և ներքին գործերի նախարարության

ենթակայության ներքո, այսպիսով, գործելով այդ նախարարությունների հսկողության տակ և դրանց հետ սերտ համագործակցությամբ,

- հիմնականում գործում է ընդունող պետության ներդրումային գերակա ծրագրերի շրջանակում՝ պետությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին և պետական կամ մասնավոր ձեռնարկություններին կամ ֆինանսական հաստատություններին տրամադված դրամաշնորհների, երկարաժամկետ վարկերի և երաշխիքներին միջոցով, կամ իր գործունեության շրջանակում գործող ձեռնարկություններում մասնակցություն ունենալու ձևով,

- առաջարկում է նաև խորհրդատվական, վերապատրաստման և տեխնիկական աջակցության ծառայությունների տրամադրում,

Հաշվի առնելով, որ 1977 թվականին ֆրանսիական իրավունքի հիման վրա որպես ընկերություն ստեղծված ՊՐՈՊԱՐԿՈ-ն.

- զարգացման ֆինանսական հաստատություն է, որը տնօրինում է գլխավորապես ՋՖԳ-ն և հետևաբար դրա աշխատակազմը ամբողջապես տրամադրվում է ՋՖԳ-ի կողմից,

- հիմնականում նպատակ ունի օժանդակելու մասնավոր ներդրումներին թույլ զարգացած և զարգացող երկրներում ի նպաստ աճի, կայուն զարգացման և Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) իրագործման,

- ֆինանսավորում է տնտեսապես կենսունակ, սոցիալապես հավասար, բնապահպանական առումով կայուն և ֆինանսական առումով արդյունավետ ծրագրերը,

- ներդրումներ է կատարում աշխարհագրական տարբեր գոտիներում՝ սկսած խոշոր զարգացող երկրներից մինչև ամենաաղքատ երկրները, մասնավորապես՝ Աֆրիկայում, սոցիալական և բնապահպանական պատասխանատվության բարձր պահանջներով,

- առաջարկում է զարգացող երկրներում մասնավոր ներդրողների հատուկ պահանջներին համապատասխան ամբողջական ֆինանսական գործիքներ (վարկեր, բաժնեմասեր, քվազի բաժնեմասային գործիքներ, երաշխիքներ և ֆինանսական ինժեներիա),

- գործում է միայն այն դեպքում, երբ տեղական ոչ մի ֆինանսական հաստատություն չի կարող առաջարկել նույնանման ծառայություններ կամ ֆինանսական գործիքներ,

Հաշվի առնելով, որ Կողմերի ընդհանուր շահերից է բխում կնքել սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր»), որը թույլ կտա ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին Հայաստանում ցուցաբերել իրենց ֆինանսական և տեխնիկական աջակցությունը՝ Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացման նպատակներին համապատասխան,

Գործելով անկախության, ինքնորոշման, ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության սկզբունքները հարգելու հիման վրա,

Կողմերը համաձայնեցին հետևյալի մասին.

## **ՀՈԴՎԱԾ 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1. ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին պաշտոնապես թույլատրվում է տրամադրել ֆինանսական և տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետությանը:
2. Սույն Համաձայնագրի նպատակն է հստակեցնել ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրման, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ կիրառելի կանոնները, մասնավորապես իրավաբանական, հարկային, ֆինանսական կամ այլ պայմանները՝ սույն Համաձայնագրի, Կողմերի պետությունների օրենսդրության և համապատասխան միջազգային պարտավորությունների համաձայն:

## **ՀՈԴՎԱԾ 2 ԶՖԳ-Ի ԵՎ ՊՐՈՊԱՐԿՈ-Ի ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

1. ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն օգտվում են Հայաստանի Հանրապետությունում իրենց գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ իրավաբանական անձի կարգավիճակից և իրավունակությունից:

2. ՀՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն մասնավորապես կարող են՝

- a) իրականացնել անհրաժեշտ ցանկացած գործունեություն սույն Համաձայնագրում սահմանված իրենց առաքելությունն իրականացնելու համար,
- b) ձեռք բերել և տնօրինել ցանկացած անշարժ և շարժական գույք (բացառությամբ հողի՝ հայկական օրենսդրությանը համապատասխան),
- c) բանակցություններ վարել և կնքել ցանկացած համաձայնագիր կամ պայմանագիր, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված իրենց թույլատրելի գործունեության շրջանակներում,
- d) ընդունել Հայաստանի Հանրապետության Կառավարության կամ պետական կամ մասնավոր կառույցների կողմից տրամադրված ցանկացած տեսակի երաշխիք կամ պարտավորությունների կատարման ապահովում,
- e) աշխատանքի ընդունել Հայաստանի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիությամբ անձնակազմի,
- f) հանդես գալ դատարաններում որպես հայցվոր կամ պատասխանող, ցանկացած այլ դատական ատյանների, արբիտրաժի կամ իշխանության առջև՝ իրենց կարգավիճակին և ֆրանսիական կիրառելի օրենսդրությանը համապատասխան և նախաձեռնել կամ մասնակցել ցանկացած վարչական ընթացակարգի հայկական ցանկացած հաստատության կամ մարմնի առջև:

### ՀՈԴՎԱԾ 3

#### ՁՖԳ-Ի ԵՎ ՊՐՈՊԱՐԿՈՒԻ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈՒ-ին թույլատրվում է.
  - a) տրամադրել ֆինանսական օժանդակություն Եվրոյով, ԱՄՆ դոլարով կամ ցանկացած այլ արտարժույթով, և ֆինանսական կամ տեխնիկական ցանկացած աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, պետական կամ մասնավոր ձեռնարկություններին և պետական կամ մասնավոր ֆինանսական կամ բանկային հաստատություններին, ինչպես նաև ազգային կամ միջազգային հանրային կամ մասնավոր կազմակերպություններին և գլխավորապես Հայաստանի Հանրապետությունում գործող կամ տեղակայված ցանկացած իրավաբանական միավորի, որն առնչություն ունի ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈՒ-ի որևէ գործունեության հետ, նկատի ունենալով, որ միջազգային կազմակերպությունների դեպքում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Կառավարության համաձայնությունը,
  - b) ազատորեն ձեռք բերել ազգային կամ օտարերկրյա վաճառողներից ցանկացած ընկերության կապիտալում մասնակցությունը (անկախ դրանց կազմակերպչական ձևից), ներդրումներ կատարել ներդրումային ֆոնդերում և ազատորեն տնօրինել կամ փոխանցել իրենց մասնաբաժինները կամ մասնակցությունը ազգային կամ օտարերկրյա ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, բացառությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, որևէ ֆինանսական կազմակերպության կապիտալում մասնակցության համար պահանջվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախնական թույլտվությունը,
  - c) իրականացնել խորհրդատվական, տեխնիկական օժանդակության, վերապատրաստման կամ ուսուցման ծառայություններ պետական կամ մասնավոր կառույցների համար:

2. Վերոհիշյալ գործունեությունից յուրաքանչյուրը կարգավորվում է հատուկ պայմանագրով կամ սահմանելով համապատասխան կառույցի պարտավորությունները և հանձնառություններն ըստ կոնկրետ գործունեության կամ գործողության տեսակի: Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհրաժեշտ ջանքեր գործադրել նշված պայմանագրի վավերականությունը կամ ուժի մեջ մտնելը ապահովելու համար պահանջվող հնարավոր ընթացակարգերը հեշտացնելու համար:
3. Առանց հակասելու սույն հոդվածի 1(b) կետին՝ սույն Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության իրականացման համար չեն պահանջվում օրենսդրական, կանոնակարգող կամ վարչական բնույթի թույլտվություններ, արտոնագրեր կամ լիցենզիաներ Հայաստանի Հանրապետությունում ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի նշված գործունեությունը գործարկելու և իրականացնելու համար:
4. ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության իրականացման համար սույն Համաձայնագրի շրջանակներում ծրագրերը և համաձայնությունները կարող են ենթակա լինել ֆրանսիական օրենսդրությանը կամ ֆրանսիական դատարանի իրավազորությանը կամ միջազգային արբիտրաժային դատարանի կամ որևէ այլ՝ վեճերի լուծման համար փոխադարձաբար համաձայնեցված մարմնի իրավազորությանը, և կայացված վճիռը կամ որոշումները պետք է լիովին ընդունվեն Կողմերի կողմից և կատարվեն Հայաստանի Հանրապետությունում:
5. ՊՐՈՊԱՐԿՈ-ն յուրաքանչյուր տարի տվյալ օրացուցային տարվա վերջին հաջորդ 60 օրվա ընթացքում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը իր գործունեության մասին:
6. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն չեն կարող ավանդ ընդունել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ընկերություններից կամ ֆիզիկական անձանցից:

**ՀՈԴՎԱԾ 4**  
**ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ**

1. ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեությունը և գործողությունները համարվում են նախապատրաստված, որոշված և իրականացված Ֆրանսիայի Հանրապետությունում տեղակայված գլխամասային գրասենյակից:
2. ԶՖԳ-ն, ՊՐՈՊԱՐԿՈ-ն և սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածում նշված դրանց ներկայացուցչությունները Հայաստանի Հանրապետությունում չունեն բանկի կամ այլ ֆինանսական հաստատության կարգավիճակ: Ուստի, դրանք չեն ենթարկվում ոչ բանկային ոլորտը կանոնակարգող օրենսդրության դրույթներին, ոչ էլ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված կամ գործող ցանկացած տեսակի բանկերի կամ ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությանը:
3. Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքում ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն ազատվում են՝
  - a) որևէ ծանուցման կամ հաշվետվությունների ներկայացման պարտավորությունից,
  - b) բանկային ցանկացած թույլտվություն կամ լիցենզիա ունենալուց,
  - c) ռիսկերի կառավարման հարցերով որևէ պարտավորությունից,
  - d) նախազգուշական (պրուդենցիալ) որևէ պարտավորությունից,
  - e) իրենց պարտքերն ու պահանջները դասակարգելու որևէ պարտավորությունից և այդ պարտքերն ու պահանջները մարելու համար պահուստներ ստեղծելուց,
  - f) Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և կանոնակարգերից բխող որևէ վարչական պարտավորությունից կամ պարտականությունից, բացառությամբ վճարային հաշվեկշռի հաստատման համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը և բանկային ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության կենտրոնացումը:

**ՀՈԴՎԱԾ 5**  
**ՓՈԽԱՐԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը թույլատրում է՝

- a) ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի ֆինանսավորման ցանկացած շահառուին կամ այդ ֆինանսավորման ցանկացած երաշխավորին (չհակասելով երաշխիքի կամ պարտապանի գույքով ապահովման ձևին),
- b) դրամական միջոցներ փոխանցող ցանկացած հայկական կամ արտասահմանյան միջնորդ բանկին, ինչպես նաև
- c) ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին

փոխարկել ցանկացած արտարժույթի՝ փոխարկող գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով, և Հայաստանի Հանրապետության տարածքից անարգել, առանց սահմանափակման կամ նախնական ձևակերպումների փոխանցել ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հասանելիք գումարները, մասնավորապես (առանց սահմանափակման)՝ ֆինանսավորումների մարման գումարները՝ ինչպես մայր գումարը, այնպես էլ տոկոսները, ուշացման դիմաց տոկոսները, լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության արդյունքում գոյացած այլ գումարները (այդ թվում՝ երաշխիքները և գրավադրման իրավունքը):

2. ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին նաև թույլատրվում է ցանկացած արտարժույթով բանկային հաշիվներ ունենալ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև փոխարկել արտարժույթի՝ փոխարկող գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով, և Հայաստանի Հանրապետության տարածքից անարգել, առանց սահմանափակման կամ նախնական ձևակերպումների փոխանցել մասնաբաժինների կամ անշարժ կամ շարժական գույքի վաճառքից գոյացած գումարներ, շահաբաժիններ և ցանկացած այլ օգուտ,

կապիտալի աճ (հավելում), իրացման արտադրանք և ընդհանրապես ցանկացած եկամուտ, միջնորդավճար կամ ցանկացած բնույթի ֆոնդեր, ներառյալ, մասնավորապես՝ դատարանի վճռից կամ արբիտրաժի որոշումից բխող վնասների փոխհատուցումը, և տոկոսները, երբ այդ գումարները հիմնականում գոյանում են Հայաստանի Հանրապետությունում ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կատարած ներդրումներից կամ ցանկացած այլ գործունեությունից կամ դրանց հետ կապված կամ դրանց իրացման արդյունքում: Այդ գործունեությունն իրականացվում է Կողմերից յուրաքանչյուրի միջազգային պարտավորություններին համապատասխան:

3. Բացի այս՝ ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրվում է, անհրաժեշտության դեպքում, փոխառության կամ այլ ֆինանսական գործողության, փոխարկման կամ վարկի տեսքով ուղղակի վճարումներ կատարել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող մատակարարներին կամ շահագրգիռ փոխառուի կամ շահառուի համակատարողներին՝ երբ դրանք օգտագործվում են Հայաստան Հանրապետությունից դուրս ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար, ինչպես նաև օգտվել իրենց վարկերը մարելու նպատակով ուղղակի փոխհատուցումից Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող արտարժույթի միջոցով, երբ դա անհրաժեշտ է:
4. Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված և գործող բանկերին թույլատրվում է՝
  - a) փոխարկել ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի պարտապաններից ստացած հայկական դրամը (AMD) ցանկացած արտարժույթի՝ փոխարկման գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը տվյալ բանկի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով, և
  - b) այդ արտարժույթը փոխանցել ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտասահմանյան բանկային հաշիվներին (մասնավորապես՝ Ֆրանսիայի Հանրապետությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում):

5. Այն դեպքում, երբ հայկական բանկերը կիրառարվեն կատարել արտարժույթի փոխարկում կամ փոխանցում կամ չեն ունենա բավարար չափով արտարժույթ այդ գործողությունները կատարելու համար կամ այն դեպքում, երբ որևէ այլ պատճառով բանկերին չեն թույլատրի ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին պատկանող հայկական դրամը (AMD) փոխարկել և այն փոխանցել արտասահման, Հայաստանի Հանրապետության Կառավարությունն (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով) իր լիազորությունների շրջանակներում և հայկական օրենսդրությանը համապատասխան, դյուրացնում է նշված հայկական դրամի (AMD) փոխարկումը արտարժույթի՝ այդ բանկերի կողմից կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համապատասխան փոխարկման օրվա դրությամբ հրապարակված կիրառելի փոխարժեքով, որպեսզի դրանք իրականացնեն ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտասահմանյան բանկային հաշիվներին փոխանցումները:

#### ՀՈԴՎԱԾ 6

#### ՀԱՐԿԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը կրում է հարկային բեռը կամ ազատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերից, տուրքերից կամ վճարումներից (ինչպիսիք են, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ մաքսատուրքեր, ավելացված արժեքի հարկ և աղբյուրի մոտ գանձվող հարկեր) ՁՖԳ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ իրականացվող միջոցառումները, առանց հակասելու սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետին, այն գործունեության նկատմամբ, որոնք նշված են 2-րդ և 3-րդ հոդվածներում և ամեն դեպքում իրականացվում են սույն Համաձայնագրի շրջանակներում:
2. Սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ազատումը կիրառվում է, *inter alia*, ՁՖԳ-ի կողմից իր ցուցաբերած օժանդակության շրջանակներում (պետական կամ մասնավոր կառույցներին) ձեռք բերված արտադրանքների և գործիքների նկատմամբ (օրինակ՝ տոկոսներ, կոմիսիոն վճարներ, հնարավոր փոխհատուցումներ, շահութաբաժիններ, որպես ընկերության ղեկավար ստացած վարձատրություններ կամ

բաժնեմասերի մասնակցության փոխանցումներից ստացված հավելավճարներ), անկախ նրանից՝ դրանք վերաբերում են վարկերին (այդ թվում՝ ռիսկի ենթամասնակցություն), թե օժանդակության տեսքով կապիտալիում մասնակցությանը կամ քվազի սեփականություն հանդիսացող ֆինանսական միջոցներին (ինչպիսիք են՝ բաժնետերերի փոխարկելի պարտատոմսեր, բաժնետիրական ընթացիկ հաշիվներ, մասնակցության փոխատվություններ, ստորադաս փոխատվություններ) կամ տրված երաշխիքներին:

3. ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի օգտին կատարված փաստացի, անհատական կամ այլ ապահովումները, ինչպես նաև ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից օգտագործվող անշարժ գույքի վարձակալության, վարկային պայմանագրի լիզինգի, կառավարման և փոխանցման գործարքները ազատվում են բոլոր տուրքերից, հարկերից, գրանցման վճարներից և այլ հարկերից և կոմիսիոն վճարներից, որոնք վճարվում են հայկական համապատասխան մարմիններին, ներառյալ հիպոտեքի գրանցման հայկական մարմին կամ դրա համարժեք մարմին:

4. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն ազատված են Հայաստանի Հանրապետությունում աղբյուրի մոտ գանձվող բոլոր հարկերից, հետևաբար՝ ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին տոկոսներ, շահաբաժիններ, կոմիսիոն վճարներ, հոնորարներ կամ որևէ այլ գումար վճարող պետական կամ մասնավոր ոչ մի կառույց չի պահանջի ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին վճարվելիք գումարներից որևէ հարկի կամ որևէ այլ վճարի պահում կամ նվազեցում:

## ՀՈԴՎԱԾ 7

### ՁՖԳ-Ի ԵՎ ՊՐՈՊԱՐԿՈ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

1. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն կարող են երևանում կամ Հայաստանի Հանրապետությունում որևէ այլ վայրում սույն Համաձայնագրով նախատեսված գործունեությունն իրականացնելու նպատակով, դրա ուժի մեջ մտնելուց և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում գրանցվելուց հետո, բացել ներկայացուցչություն (այսուհետ՝ «Ներկայացուցչություն»)՝ առանց որևէ այլ ընթացակարգերի:

2. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն տեղակայվում են միևնույն Ներկայացուցչությունում: Այդուհանդերձ, ՊՐՈՊԱՐԿՈ-ն կարող է դիմել առանձին Ներկայացուցչություն բացելու խնդրանքով:
3. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն, իրավասու են գործել իրենց Ներկայացուցչությունների միջոցով՝ սույն Համաձայնագրին համապատասխան:
4. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը դյուրացնում է Ներկայացուցչության բացումը և գործունեությունը՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան:
5. Ներկայացուցչությունը պատասխանատու է ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի այն ծրագրերը որոշելու համար, որոնք կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետությունում, այդ ծրագրերին առնչվող փաստաթղթերի պատրաստման և բանակցությունների վարման, ինչպես նաև դրանց իրականացման նկատմամբ հսկողության համար: Սակայն, անկախ սույն Համաձայնագրին հակասելու հանգամանքից, պետք է հստակեցնել, որ միայն Ֆրանսիայի Հանրապետությունում տեղակայված ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գլխամասային գրասենյակներն են ստանձնում և կրում պատասխանատվություն հետևյալի համար՝
  - a) ծրագրերի վարման ընթացակարգ,
  - b) ծրագրերի գնահատում,
  - c) ֆինանսավորման որոշումների կայացում,
  - d) ֆինանսական միջոցների հատկացում և
  - e) վարկերի մարման նկատմամբ հսկողություն:
6. Ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում չունի մշտական հաստատության կարգավիճակ և հետևաբար դրա վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը:

7. Ներկայացուցչությունը օգտվում է հետևյալ դյուրացումներից, արտոնություններից և անձեռնմխելիությունից.

- a) բոլոր հարկերից, տուրքերից և վճարներից ազատում (ներառյալ՝ ԱԱՀ կամ համարժեք հարկերը), այն պարտավոր չէ հավաքել կամ փոխանցել մաքսատուրքեր կամ այլ վճարներ Ներկայացուցչության գործունեության համար անհրաժեշտ ներմուծված կամ ձեռք բերված սարքավորումների համար, այդ թվում՝ շարժիչով տրանսպորտային միջոցների համար, որոնց ընդհանուր քանակը պետք է նախապես համաձայնեցվի Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ,
- b) Ներկայացուցչությունը, նրան պատկանող անշարժ գույքը, դրամավարկային միջոցները, ֆոնդերը և ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից և տնօրինման կամ սեփականության ձևից, օգտվում են օրենսդրական, դատական կամ վարչական ցանկացած իրավազրույթի անձեռնմխելիությունից՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը գրավոր ձևով այդ անձեռնմխելիությունից բացահայտորեն հրաժարվելու մասին ծանուցելու դեպքում, ելնելով այն բանից, որ անձեռնմխելիությունից հրաժարումը չի տարածվում հարկադիր միջոցների կամ հարկադիր կատարման միջոցների վրա,
- c) ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գրասենյակները, դոսիեները, փաստաթղթերը, արխիվները, կապի միջոցները, անկախ կրիչի ձևից, և ցանկացած այլ գույքը կամ ակտիվները (ինչպիսիք են՝ կապիտալը, եկամուտները, շահաբաժինները, հավելածը, մասնաբաժինը, պահանջը) անձեռնմխելի են. դրանք, անկախ գտնվելու վայրից և սեփականության ձևից, օգտվում են ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կամ Ներկայացուցչության հանդեպ իրականացվող խուզարկության, զննման, բռնագրավման, առգրավման, հարկադիր կատարման կամ ցանկացած այլ միջամտության անձեռնմխելիությունից,
- d) Վարկերից, պայմանագրերից, դրամաշնորհներից կամ հաստատված երաշխիքներից զոյացած պարտքերը, պահանջները կամ այլ պարտավորությունները, որոնք երաշխավորվում կամ կառավարվում են ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից, օգտվում են ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կամ Ներկայացուցչության հանդեպ իրականացվող բռնագրավման,

առգրավման կամ հարկադիր կատարման կամ ցանկացած այլ միջամտության ձևից անձեռնմխելիությունից,

- e) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը պարտավորվում է չպետականացնել կամ չօտարել կամ չձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնց հետևանքով ՁՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կամ Ներկայացուցչության սեփականության, ակտիվի կամ ֆոնդերի օգտագործումն անհնարին կդառնա կամ կհանգեցնի դրանց պետականացման կամ օտարման: Եթե հանրության գերակա շահերից ելնելով նման միջոցներ են ձեռնարկվել կամ գործողություն է կատարվել, ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հատկացվում է նախնական համարժեք փոխհատուցում ազատ փոխարկելի արտարժույթով: Ֆինանսական փոխհատուցման պայմանները փոխադարձ համաձայնեցվում են Կողմերի կողմից ընդունված՝ անկախ կերպով սահմանված շուկայական գնով:

## ՀՈԴՎԱԾ 8

### ՁՖԳ-Ի ԵՎ ՊՐՈՊԱՐԿՈ-Ի ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

1. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն սահմանում են իրենց անձնակազմի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և մշտական բնակության իրավունք չունեցող անդամների (այսուհետ՝ արտագնա աշխատակիցներ) քանակը և մասնագիտական որակավորումը, որը նրանք անհրաժեշտ են համարում Ներկայացուցչության բնականոն գործունեության համար: Անձնակազմի անդամների ցուցակը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:
2. ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն վճարում են արտագնա աշխատակիցների աշխատավարձերը, փոխհատուցումները և տրանսպորտային ծախսերը: Այդ աշխատակիցներն օգտվում են ֆրանսիական սոցիալական ապահովության համակարգի բժշկական և կենսաթոշակային ապահովագրությունից և հետևաբար նրանց նկատմամբ այս ոլորտում չի կիրառվում Հայաստանի Հանրապետությունում գործող կարգը: Մասնավորապես, ՁՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն չեն վճարում հայկական սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում գործատուների կողմից սովորաբար կատարվող սոցիալական վճարումները:

3. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հեշտացնում է արտագնա աշխատակիցների և նրանց ընտանիքների այն անդամների մուտքը, կեցությունը, բնակության իրավունքը, տեղաշարժվելու ազատությունը և ելքը, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվել է կացության հատուկ քարտ:
4. Հայաստանի Հանրապետությունը արտագնա աշխատակիցներին իր տարածքում տրամադրում է հարկերից, նեմուծման և այլ տուրքերից ազատում, արտոնություններ և առավելություններ: Մասնավորապես արտագնա աշխատակիցներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվում են հետևյալ առավելություններն ու արտոնությունները.
  - a) Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու թույլտվության և մուտքի բազմակի վիզայի տրամադրում և Հայաստանի Հանրապետության տարածքում կացության թույլտվության տրամադրում,
  - b) անձնական իրերի, մասնավորապես անձնական օգտագործման համար տրանսպորտային միջոցի և կենցաղային սարքավորումների ներկրման մաքսատուրքերից և հարկերից ազատում,
  - c) Հայաստանի Հանրապետությունում ՋՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի համար իրենց գործունեության հետ կապված վարձատրությունների և փոխհատուցումների առնչությամբ եկամտահարկից և այլ համանման հարկերից ազատում, բացառությամբ հայաստանյան աղբյուրից ստացված եկամտահարկը,
  - d) անձնական իրերը դեպի Հայաստան և Հայաստանից ազատ տեղափոխելու համար անհրաժեշտ ցանկացած թույլտվության տրամադրում,
  - e) արտագնա աշխատակցի ընտանիքի անդամին այդ արտագնա աշխատակցի մուտքի թույլտվության կամ վիզայի ժամանակահատվածի ժամկետով վավեր աշխատանքի թույլտվության տրամադրում, որի հիման վրա նա կարող է աշխատել Հայաստանի Հանրապետությունում,

- f) անձեռնմխելիություն իրավազրույթունից և որոշումների հարկադիր կատարումից՝ իրենց կողմից ասվածի և գրվածի, ինչպես նաև իրենց պաշտոնական պարտականությունների կատարման առնչությամբ կատարված ցանկացած գործողության համար:

#### ՀՈԴՎԱԾ 9

#### ԶՖԳ-Ի ԵՎ ՊՐՈՊԱՐԿՈՒ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

1. ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈՒ-ն կարող են աշխատանքի ընդունել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ բնակության իրավունք ունեցող անձանց՝ աշխատանքային իրավունքի և սոցիալական ապահովության կամ առողջապահության ապահովագրության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
2. Սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում սահմանված հարկերից ազատումը և արտոնությունները ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈՒ-ի հայաստանյան աշխատակիցների նկատմամբ չեն կիրառվում, բացառությամբ 8-րդ հոդվածի 4(f) կետում նշված անձեռնմխելիությունը, որը կիրառելի է ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈՒ-ի կողմից իրենց աշխատակիցներին հանձնարարված առաքելությունների համատեքստում:

#### ՀՈԴՎԱԾ 10

#### ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետությունում իրենց գործունեությունն իրականացնելու նպատակով ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈՒ-ն կարող են ժամանակավոր առաքելություններ գործուղել Հայաստանի Հանրապետություն կամ նշանակել խորհրդատուներ՝ ծրագրերի նախապատրաստման և/կամ իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու համար:
2. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ժամանակավոր առաքելությունների անդամները սեղմ ժամկետներում ստանան Հայաստանի

Հանրապետության տարածք մուտքի, այնտեղ գտնվելու և ելքի անհրաժեշտ թույլտվություններ:

3. Ինչ վերաբերում է միգրացիայի բնագավառում գործող կարգավորումներին, ապա այդ ժամանակավոր առաքելությունների անդամներն օգտվում են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող զարգացման միջազգային ֆինանսական հաստատությունների՝ առաքելություն իրականացնող աշխատակիցների նկատմամբ կիրառելի կարգավորումներից:
4. Ժամանակավոր առաքելությունների անդամները չեն օգտվում արտագնա աշխատակիցների համար սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից, բացառությամբ 8-րդ հոդվածի 4(f) կետում նշված անձեռնմխելիությունը, որը կիրառելի է ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից իրենց աշխատակիցներին հանձնարարված առաքելությունների համատեքստում:

#### **ՀՈԴՎԱԾ 11 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում սահմանված գործունեության առնչությամբ ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործողությունները հեշտացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համաձայնում է իրավասու մարմիններին փոխանցել անհրաժեշտ տեղեկատվություն սույն Համաձայնագիրը լիարժեք իրականացնելու նպատակով:

#### **ՀՈԴՎԱԾ 12 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից պահանջվող ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստացվելու ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել ցանկացած պահի՝ Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները ձևակերպվում են արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի առաջին կետով նախատեսված կարգով:
3. Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման շուրջ ծագած բոլոր տարաձայնությունները լուծվում են բարեկամաբար՝ Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:
4. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով, Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել դրա գործողությունը՝ վեց ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այս ժամկետը հաշվարկվում է նշված ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից: Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում ընթացքում գտնվող ծրագրերի և պայմանավորվածությունների առնչությամբ սույն Համաձայնագրից բխող Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա:
5. Սույն Համաձայնագիրը, դրա ուժի մեջ մտնելու պահից, կիրառվում է ընթացքում գտնվող ծրագրերի, պայմանավորվածությունների և ցանկացած համագործակցության նկատմամբ:

Կատարված է Երևան քաղաքում, 2018 թվականի մայիսի 28-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**



**ՋՈՀՐԱԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

**Արտաքին գործերի նախարար**

**ՖՐԱՆՍԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**



**ԺԱՆ-ԻՎ ԼԸ ԴԻԻԱՆ**

**Եվրոպայի և արտաքին  
գործերի նախարար**

ACCORD

ENTRE LE GOUVERNEMENT DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE  
ET LE GOUVERNEMENT DE LA RÉPUBLIQUE FRANÇAISE  
RELATIF À L'ÉTABLISSEMENT ET AUX ACTIVITÉS  
DE L'AGENCE FRANÇAISE DE DÉVELOPPEMENT (AFD)  
ET DE LA SOCIÉTÉ DE PROMOTION ET DE PARTICIPATION POUR LA  
COOPÉRATION ÉCONOMIQUE (PROPARCO) EN ARMÉNIE

## LE GOUVERNEMENT DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE

et

## LE GOUVERNEMENT DE LA RÉPUBLIQUE FRANÇAISE

ci-après désignés collectivement « Les Parties »

**Rappelant** que les Parties ont la même volonté de renforcer leurs liens d'amitié et de coopération ;

**Considérant** qu'il existe une volonté commune d'intensifier et d'élargir leur coopération économique et financière ;

**Reconnaissant** que l'Agence Française de Développement (ci-après, l'« AFD ») et la Société de Promotion et de Participation pour la Coopération Économique (ci-après, « PROPARCO »), en sa qualité de filiale spécialisée dans le financement du développement du secteur privé développent leurs activités sur le territoire de la République d'Arménie ;

**Rappelant** que l'AFD et PROPARCO sont au cœur du dispositif français de l'aide publique en faveur des pays en développement et exercent leurs activités dans plus de 80 pays grâce à leur réseau d'une soixantaine de représentations locales ;

**Rappelant** que l'AFD est un établissement public à caractère industriel et commercial, régi par des statuts réglementaires du Code monétaire et financier français :

- lutte contre la pauvreté, soutient la croissance économique et participe à la préservation des biens publics mondiaux dans les pays en développement et émergents et les territoires français d'Outre-mer ;
- est placée sous la tutelle du ministère de l'Europe et des Affaires étrangères, du ministère de l'Économie et des Finances, du ministère des Outre-mer et du ministère de l'Intérieur français ; elle agit donc sous la supervision et en étroite collaboration avec ces ministères ;
- intervient principalement dans le cadre du programme d'investissement prioritaire de l'État hôte au moyen de subventions, prêts à long terme et garanties accordés à l'État, aux collectivités locales et entreprises ou institutions financières publiques ou privées ou sous la forme de prises de participation dans des entreprises opérant dans ses zones d'intervention ;
- offre également des prestations de conseil, de formation et d'assistance technique ;

